

22. Թատերահանդիսային գործունեություն

2003թ. հանրապետությունում գործել են 22 թատերահանդիսային կազմակերպություններ, որոնցից 13-ը՝ դրամատիկական, 4-ը՝ երաժշտական, 3-ը՝ տիկնիկային, մնացած 2-ը՝ պատանի հանդիսատեսի թատրոնն է և հայպետկրկեսը: Գործող թատերական կազմակերպությունների քանակը 2002թ. համեմատ ավելացել է 1-ով:

Երևան քաղաքում գործել են 15, Շիրակի և Սյունիքի մարզերում՝ 2-ական, Արարատի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում՝ 1-ական թատերահանդիսային կազմակերպություններ:

Թատերահանդիսային կազմակերպությունների կողմից 2003թ. ցուցադրվել է 1313 (2002թ.՝ 1415) ներկայացում, որոնցից 37.5%-ը՝ տիկնիկային, իսկ 12.6%-ը՝ երաժշտական ժանրի: Արարատի և Գեղարքունիքի մարզային թատրոնները ներկայացումներ են կազմակերպել նաև իրենց մարզերի գյուղական համայնքներում: Արտասահմանում հյուրախաղերով հանդես է եկել 2 թատերային կազմակերպություն, ներկայացումների քանակը՝ 6:

2003թ. թատրոններ հաճախումների քանակը 2002թ. համեմատ նվազել է 5.4 հազարով և կազմել 273.9 հազ., նրանց 20.2%-ը հաճախել է տիկնիկային թատրոններ, 13.3%-ը երաժշտական: Հանրապետության 1000 բնակչի հաշվով հաճախումները կազմել են 85:

2003թ. պատրաստվել և հանդիսատեսին է ներկայացվել 35 նոր (2002թ.՝ 54) և 5 հիմնավերականգնված (2002թ.՝ 11) ներկայացում:

Թատերական ներկայացումներից ստացված հասույթը կազմել է 125.8 մլն. դրամ, որի 1.2%-ը ստացվել է գյուղական համայնքներում կազմակերպված ներկայացումներից, 15.5%-ը՝ երաժշտական, 9.7%-ը՝ տիկնիկային ներկայացումներից: Միջին հաշվով մեկ ներկայացման մուտքի վճարումներից հասույթը կազմել է 96.0 հազ. դրամ, ընդ որում, գյուղական համայնքներում այդ ցուցանիշը կազմել է 17.6 հազ. դրամ:

Թատերահանդիսային կազմակերպությունների ընդհանուր ֆինանսական միջոցները 2003թ. կազմել են 820.4 մլն. դրամ, որի 77.3%-ը՝ ՀՀ պետական բյուջեից, 15.3%-ը՝ բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից, 1.9%-ը՝ վարձակալությունից, 1.5%-ը՝ նվիրատվություններից, 4.0%-ը՝ այլ աղբյուրներից:

Թատերահանդիսային կազմակերպությունների ֆինանսական ընդհանուր ծախսերը կազմել են 724.1 մլն. դրամ, որի 53.6%-ն աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումներն է, 17.8%-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները, 8.7%-ը՝ ոչ նյութական ծառայությունների վճարումները, 7.2%-ը՝ նյութական ծախսերը, 6.9%-ը՝ գործուղման ծախսերը, 2.3%-ը՝ հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսերը, 3.5%-ը՝ այլ ծախսերն են: Միջին հաշվով մեկ ներկայացման ֆինանսական ծախսերը 2003թ. կազմել են 553 հազ. դրամ:

Պետական մասնագիտացված թատրոնների քանակական բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ ենթակայության, 2003թ.

(միավոր)


	Թատրոնների քանակը	այդ թվում՝ ըստ ենթակայության	
		ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության	համայնքների
ք.երևան	15	13	2
Արարատ	1	1	-
Գեղարքունիք	1	-	1
Լոռի	1	1	-
Շիրակ	2	1	1
Սյունիք	2	-	2
Ընդամենը ՀՀ	22	16	6

Պետական մասնագիտացված թատրոնների գործունեությունը ըստ մարզերի, 2003թ.

	Ներկայացումների քանակը, միավոր	Ներկայացումների քանակը մեկ կազմակերպության հաշվով, միավոր	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Հանդիսատեսների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ	Ստացված հասույթը, մլն. դրամ	Ստացված հասույթը մեկ ներկայացման հաշվով, հազ. դրամ
ք.երևան	1044	69	229.0	220	116.1	111.5
Արարատ	60	60	6.5	108	1.5	25.0
Գեղարքունիք	34	34	3.0	88	0.1	2.9
Լոռի	72	72	12.2	169	2.8	38.9
Շիրակ	68	34	15.4	226	4.8	70.6
Սյունիք	35	18	7.8	223	0.5	14.3
Ընդամենը ՀՀ	1313	60	273.9	209	125.8	96.0


Հաճախումները թատրոն 1000 բնակչի հաշվով, մարդ.

2003



Հանդիսատեսների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ

2003



Հանրապետության միջինը 209

Հավելված 16

Պետական մասնագիտացված թատրոնների քանակական բաշխվածությունն ըստ մարզերի, 1997-2003թթ.

(միավոր)

	1997	1998	1999	2000	2001	2002	2003
ք.երևան	13	14	14	14	14	14	15
Արարատ	1	1	1	1	1	1	1
Գեղարքունիք	1	1	1	1	1	1	1
Լոռի	1	1	1	1	1	1	1
Շիրակ	2	2	2	2	2	2	2
Սյունիք	2	2	2	2	2	2	2
Ընդամենը ՀՀ	20	21	21	21	21	21	22

Պետական մասնագիտացված թատրոնների ներկայացումների քանակական բաշխվածությունն ըստ մարզերի, 1997-2003թթ.

ա) ընդամենը

(միավոր)

	1997	1998	1999	2000	2001	2002	2003
ք.երևան	1467	1520	1694	1472	1225	1099	1044
Արարատ	92	144	65	51	94	95	60
Գեղարքունիք	173	116	196	41	30	30	34
Լոռի	41	65	36	51	49	49	72
Շիրակ	125	129	51	54	52	99	68
Սյունիք	175	50	51	36	77	43	35
Ընդամենը ՀՀ	2073	2024	2093	1705	1527	1415	1313

բ) մեկ կազմակերպության հաշվով

(միավոր)

	1997	1998	1999	2000	2001	2002	2003
ք.երևան	113	109	121	105	88	79	69
Արարատ	92	144	65	51	94	95	60
Գեղարքունիք	173	116	196	41	30	30	34
Լոռի	41	65	36	51	49	49	72
Շիրակ	63	65	26	27	26	50	34
Սյունիք	88	25	26	18	39	22	18
Ընդամենը ՀՀ	104	96	100	81	73	67	60

Պետական մասնագիտացված թատրոնների հանդիսատեսների թվաքանակի բաշխվածությունն ըստ մարզերի, 1997-2003թթ.

ա) ընդամենը

(հազ. մարդ)

	1997	1998	1999	2000	2001	2002	2003
ք.երևան	308.4	410.7	406.4	304.9	231.2	223.2	229.0
Արարատ	12.2	17.0	5.6	4.3	8.3	11.4	6.5
Գեղարքունիք	13.5	13.0	6.0	5.1	3.3	3.2	3.0
Լոռի	12.0	11.5	6.5	8.7	9.1	8.4	12.2
Շիրակ	21.6	28.2	19.6	21.7	22.4	20.5	15.4
Սյունիք	21.0	6.6	11.8	11.8	33.4	12.6	7.8
Ընդամենը ՀՀ	388.7	487.0	455.9	356.5	307.7	279.3	273.9

բ) մեկ ներկայացման հաշվով

(մարդ)

	1997	1998	1999	2000	2001	2002	2003
ք.երևան	210	270	240	207	189	203	220
Արարատ	133	118	86	84	88	120	108
Գեղարքունիք	78	112	31	124	110	107	88
Լոռի	293	176	181	171	186	171	169
Շիրակ	173	218	384	402	431	207	226
Սյունիք	120	132	231	328	434	293	223
Ընդամենը ՀՀ	187	241	218	209	201	197	209

Թատերական ներկայացումներից ստացված հասույթն ըստ մարզերի, 1997-2003թթ.

ա) ընդամենը

(հազ. դրամ)

	1997	1998	1999	2000	2001	2002	2003
ք.երևան	34715.2	129554.7	144417.8	129800.1	108214.6	96033.6	116128.8
Արարատ	1882.1	3384.0	1618.2	654.3	1792.7	2402.3	1478.5
Գեղարքունիք	907.7	982.0	780.0	528.0	336.6	48.0	132.0
Լոռի	1757.0	2483.0	1296.0	1763.4	2222.4	1977.7	2836.1
Շիրակ	3514.5	5510.6	3596.7	4146.3	3190.7	3595.1	4735.7
Սյունիք	1179.0	911.8	620.8	292.7	457.3	591.2	452.4
Ընդամենը ՀՀ	43955.5	142826.1	152329.5	137184.8	116214.3	104647.9	125763.5

բ) մեկ ներկայացման հաշվով

(հազ. դրամ)

	1997	1998	1999	2000	2001	2002	2003
ք.երևան	23.7	85.2	85.3	88.2	88.3	87.4	111.5
Արարատ	20.5	23.5	24.9	12.8	19.1	25.3	25.0
Գեղարքունիք	5.2	8.5	4.0	12.9	11.2	1.6	2.9
Լոռի	42.9	38.2	36.0	34.6	45.4	40.4	38.9
Շիրակ	28.1	42.7	70.5	76.8	61.4	36.3	70.6
Սյունիք	6.7	18.2	12.2	8.1	5.9	13.7	14.3
Ընդամենը ՀՀ	21.2	70.6	72.8	80.5	76.1	74.0	96.0